

ԼԻԲԱՆԱՆ ԿԸ ՄԵՐԺԵ ԱՐԱԲԱԿԱՆ ՈՐԵՒԵ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ ՅԱՐՁԱԿՈՒՄ ՄԸ

Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համուտ երէկ իր արար պաշտօնակիցներուն հետ աւարտեց հաղորդակցութիւնները՝ 9 կամ 14 Փետրուարին Լիբանանի մէջ գումարուելիք Արաբական Լիկայի անդամ երկիրներու արտաքին գործոց նախարարներու արտակարգ ժողովին մասին: Ժողովին առաջարկը եկաւ Լիբանանէն:

Համուտ նշեց, որ Լիբանանի պատկերացումը՝ Իրաքի դէմ պատերազմը կատարելու վերաբերեալ, պատրաստ է եւ անհրաժեշտ նկատեց, որ ժողովին ներկայ գտնուող այլ նախարարներ նաեւ ունենան նման պատկերացումներ:

Համուտ ընդգծեց, որ Լիբանան կը մերժէ արաբական որեւէ երկրի, յատկապէս Իրաքի դէմ կատարուելիք պիւնտրական գործողութիւնները:

ԶՕՐ. ԼԱՀՈՒՏ ՄՈՒՍԱՅԻ ՀԵՏ ԲՆՆԱՐԿԵՑ ԻՐԱՔԻ ՀԱՐՅԸ

Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա երէկ այցելեց Լիբանան եւ պատասխանատուներու հետ քննարկեց Միջին Արեւելքը յուզող վանապան հարցերը:

Մուսա նկատել տուաւ, որ Արաբական Լիկայի տարեկան վեհաժողովին թուականը մօտեցած է, եւ թէ տեղի պիտի ունենայ Մարտ ամսուան ընթացքին, սակայն ոչ անպայման Մարտ ամսուան 23ին:

Արաբական Լիկայի վեհաժողովին առաջ Իրաքը ընթացող իր հաւանականութեան մասին հարցումի մը պատասխանելով՝ Մուսա ըսաւ, որ Իրաքի հարցը շատ կարեւոր է վտանգաւոր է՝ աւելցնելով, որ բոլոր խորհրդակցութիւնները կ'ընթանան Իրաքի ուղղութեամբ:

Մուսա երէկ երեկոյեան Պաապոսայի մէջ ընդունուեցաւ նախագահ Կոր. Էմիլ Լահուդի կողմէ: Ներկայ էր նաեւ արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համուտ:

Հանդիպումին ետք, Մուսա յայտնեց, որ արաբ արտաքին գործոց նախարարներուն արտակարգ ժողովին մասնաժողովներու ներկայացուցիչները սկսած են աւելի յստականալ:

Մուսա նշեց, որ Իրաքի հարցը կը նկատուի արաբական հարց՝ իր բոլոր երեսներով, որովհետեւ անկէ բխող վտանգները կը սպառնան արաբական բոլոր երկիրներուն:

Մուսա ընդգծեց, որ Իրաքի հարցը իր բոլոր մանրամասնութիւններով կը հետապնդուի Արաբական Լիկային կողմէ, իսկ Միացեալ Նահանգներու, ՄԱԿի եւ Եւրոպական Միութեան հետ հաղորդակցութիւնները Իրաքի գծով տակաւին կը շարունակուին:

Մուսա նկատել տուաւ, որ արաբական դիւանագիտութիւնը հաւանաբար պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով պաշտօն դերակատարութիւն կ'ունենայ Իրաքի, ինչպէս նաեւ Մ. Նահանգներու եւ ՄԱԿի մօտ. պէրի քննիչներուն աշխատանքներուն ժամանակաշրջանը երկարաձգելու համար:

Մուսա շեշտեց, որ Իրաքի նախագահ Սաւա-Շարը՝ էջ 3

CONFÉRENCE INTERNATIONALE PRO ARMENIA INTERNATIONAL CONFERENCE

ԼԻԲԱՆԱՆԷՆ ՈՒԹ ՀՈԳԻՆՈՅ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ. ՈՐՈՆՅ ՇԱՐՔԻՆ՝ ՊԵՐՐԻԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉԸ. ՄԱՆԱԿՅԵՏԱԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ

ՐԱՅԱՍՏԱՆ ՈՒ ՐԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՅՈՒՂՈՂ ՐԱՐՅԵՐ ՐԱՄԱՊԱՐՓԱԿ ԲՆՆԱՐԿՈՒՄԻ ԵՆԹԱՐԿՈՒԵՑԱՆ «ՓՐՕ ԱՐՄԵՆԻԱ» ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ

«ԱԶԴԱԿ» Ի ԵՒ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ» Ի ՀԵՌԱԶԱՅՆԱՅԻՆ ՀԱՐՅԱԶՐՈՅՅԸ՝ Հ. ԶՈՊՈՅԵԱՆԻ ՀԵՏ

Ֆրանսայի Մերակոյտի «Քրեմանսօ» սրահին մէջ Շաբաթ, 1 Փետրուարին տեղի ունեցաւ միջազգային «Փրօ Արմենիա» խորհրդակցութիւնը, որուն նպատակն էր աշխարհի տարբեր երկիրներու քաղաքական շրջանակներուն ուշադրութեան առարկան դարձրնել Հայաստանի եւ Հայաստանի վերաբերող հարցերը: Խորհրդակցութիւնը կազմակերպուած էր Հ. Յ. Դ. Եւրոպայի Հայ Դատի յանձնախումբին կողմէ:



«Փրօ Արմենիա» խորհրդակցութիւնը Եւրոպայ գտնուեցան աշխարհի գաւազան երկիրներէ պետական, խորհրդարանական, քաղաքական, կուսակցական անձնաւորութիւններ, ինչպէս նաեւ՝ ակաճաւոր մտաւորականներ եւ գործիչներ

Խորհրդակցութիւնը բացուեց կատարեց կազմակերպիչ յանձնախումբի ներկայացուցիչ, Հայերի Փափագեան: Ֆրանսայի Մերակոյտի նախագահ Քրիսթիան Փոնսրիէի խօսքը՝ ուղղուած խորհրդակցութիւնը, ընթացեց Հ. Յ. Դ. Եւրոպայի Հայ Դատի յանձնախումբի կողմէ:

պական Միութեան Հայ Դատի յանձնախումբի գործադիր տնօրէն Լօրան Լէյլէկեան:

Խորհրդակցութիւնը մասնակիցներուն իր ողջ ջանքերը ուղղեց Մե-


ծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոս, որ Փա-րիզ ժամանած էր՝ մասնակցելու Համար խորհրդակցութիւնը:

Հայաստանի խորհրդարանի նախագահ Ար-

մէն Խաչատրեան իր խօսքին մէջ «Փրօ Արմենիա» խորհրդակցութիւնը նկատեց Հայ ժողովուրդին բոլոր հատուածներուն համագործակցութեան նոր պայցոյցը:

Խօսք առաւ նաեւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան, որ ներկայացուց Հայաստանի ներկայ կացութիւնը՝ միա-Շարը՝ էջ 10

ԱՄԵՐԻԿԵԱՆ «ԲՈԼՈՒՄՊԻԱ» ԱՆՋՐՊԵՏԱՆԱԻՐ ՊԱՅԹԵՑԱԻ՝ ՍՈՒԳԻ ՄԱՏՆԵԼՈՎ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐԸ



«Զոլումպիա» անջրպետանուր 16 Յունուարին թոյլ չք առաւ դէպի անջրպետ Ֆլորիտայի Բեքըտի կեդրոնէն

Ամերիկեան «Քոլումպիա» անջրպետանուր Շաբաթ օր տարանջատուեցաւ՝ կրակի գունդի մը վերածուելով, մինչ անիկա երկրագունդը կը վերագառնար: Սպաննուեցան անձնակազմի 7 անդամները եւ այրած բեկորներ տարածուեցան յայտնի զօտի մը մէջ: Միացեալ Նահանգներ սուգի մատնուեցան:

Երէկ բեկորներու եւ դիակներու փնտռութիւնը ճիշդեց շարունակուեցան, մինչ քննիչներ կը ձեռնարկէին անջրպետանաւուն պայթումին պատճառը գտնելու հսկայ աշխատանքին:

Բեկորներու փնտռութեան աշխատանքները կեդրոնացած են յատկապէս արեւելեան Թեքսասի եւ Լուիզիանայի մէջ:

ՆԱՍԱ «Քոլումպիա»-ի հետ հարող-գակցութիւնը կորսնցուցած է, մինչ անիկա Թեքսասի վերեւ կը գտնուէր Ֆլորիտայի Բէյլի Բանաւերը կեդրոնը

էջը կատարելէ 16 վայրկեան առաջ: Անջրպետագնացութեան մարզի ամերիկացի պաշտօնատարներ յայտնած են, թէ շարժմանը կամ ամփոսնու կարիքը կրնայ ըլլալ՝ գտնուելու համար Շաբաթ օրուան արկածին պատճառը եւ գայն սրբագրելու, սակայն անոնք պնդած են, որ պիտի ընեն ինչ որ անհրաժեշտ է ատիկա իրականացրնելու համար:

ՆԱՍԱ առկաիւսած է նման անջրպետանաւերու (անոնք երկրագունդէն դուրս մեկնելէ ետք, կը վերադառնան երկիր) թռիչքները, մինչեւ որ պատասխաններ գտնուին օդային պատճառին մասին: «Քոլումպիա» այդ անջրպետանաւերուն ամէնէն հինն էր:

Պաշտօնատարներ փութացին սակայն աւելցնելու, որ անջրպետագնացութեան ծրագրին առկախումբը որե-

ԻՐԱԿ ԿԸ ՍՊԱՌԵԱՅ ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԿՍԻԼ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐՈՒ ԴԻՄ

Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյն «որոշ յաղթանակ» մը կը նախատեսէ պատերազմի մը պարագային: Սատտամ, որ կը խօսէր պիւնտրական բարձրաստիճանի պատասխանատուներու հետ հանդիպումի մը, դիտել տուաւ, որ Իրաք կողմէն պատրաստ է ընդունել իր արտաքին քաղաքականութիւնը: Այնուամենայնսակաւ, որ անձնապահանակները իրաքի նոր պէնքերը պիտի դառնան: Ան աւելցուց, որ ամբողջ շրջանը պիտի բնակի եւ ամերիկացիներուն դէմ ընդդիմութեան ու ակաճաւորութեան դաշտի պիտի վերածուի: Ռամատան յայտնեց նաեւ, որ եթէ պատերազմը տեղի ունենայ,

պատանաց նաեւ անձնապահանակներու գործողութիւններու ձեռնարկել Միջին Արեւելքի մէջ ամերիկացիներու դէմ: Փոխ նախագահ Թահա Եասին Ռամատան ըսաւ, որ անձնապահանակները իրաքի նոր պէնքերը պիտի դառնան: Ան աւելցուց, որ ամբողջ շրջանը պիտի բնակի եւ ամերիկացիներուն դէմ ընդդիմութեան ու ակաճաւորութեան դաշտի պիտի վերածուի: Ռամատան յայտնեց նաեւ, որ եթէ պատերազմը տեղի ունենայ,

անիկա պիտի ըլլայ աղէտալի պայթում արաբական պետութիւններուն դէմ՝ իրենց որդեգրած տկար կեցուածքին համար: Ըստ իրաքցի պաշտօնատարին, Իրաքի դէմ պատերազմին հետեւանքը պիտի ըլլայ աւելի ծանրակշիւր քան Ա. եւ Բ. Աշխարհամարտերը: «Տապալոյ առաջին երկիրը պիտի ըլլայ Ամերիկան», նախատեսեց Ռամատան: Ան քննադատեց արաբները՝ դիտել տուով, որ եթէ անոնք միասնական կեցուած-

քով մը դէմ դնէին ամերիկեան քաղաքականութեան, Պուշ պիտի չկարենար իրականացնել պատերազմական ծրագրերը: «Պապէլ» օրաթերթը պարմանք յայտնեց եւրոպական ութ երկիրներու դեկալարիւրտուն կողմէ հրապարակուած նամակին համար: «Պապէլ» կը գրէր, որ միջազգային քաղաքականութեան ամէնէն պարմանալի ու արտասովոր դէպքը կը նկատուի, երբ դեկալարիւրտուն կողմէ կեցուածքը ուղղակի

ՇԱՐՈՆ ԼԾՈՒԱԾ Է ՀԵՊՐՈՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ԾՈՒՆԿԻ ԲԵՐԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Իսրայէլեան բանակը երէկ սկսաւ քանդել պաղեստինցիներու պատկառնող 22 ընակարաններ, որոնց մեծ մասը տակաւին շինութեան ընթացքին մէջ էր, Այսրոյրդանի Հեպթոն քաղաքին մէջ, յայտնեցին իսրայէլացի եւ պաղեստինցի պաշտօնատարները:

Հեպթոնի մէջ բնակարաններու քանդումին ակնարկելով՝ իսրայէլացի բանակը մը ըսաւ, որ Հեպթոն բնակեցման վայրի մը չափազանց մօտ կառուցուած բնակարանները ապօրինի էին: Ան աւելցուց, որ բնակարաններու տէրերուն ըսուած էր, որ չեն կրնար հոն կառուցել: Ըստ բանակի, բնակարաններէն միայն մէկը բնակուած

էր: Պաղեստինեան իշխանութեան անդամ Մաշալ Ուրաբաթ քաղաքատեց բնակարաններուն քանդումը՝ գայն պատեց քանդակուած ճիւղ նկատելու: Ուրաբաթ ըսաւ, որ իսրայէլ կ'ուզէ նոր իրաւիճակ մը հաստատել պետի վրայ, որպէսզի կարելի լիւր ընձեռուի բնակեցման նոր վայրեր կառուցելու: Ան ըսաւ նաեւ, որ իսրայէլի չի վերաբերի բնակարաններուն արտօնագրի հարցը: Ուրաբաթ կոչ չարեց Միջին Արեւելքի խաղաղութեան միջազգային քառակնի՝ ճնշումը բանեցնելու իսրայէլի վրայ, որպէսզի դադարեցնէ բնակեցման վայրերու կառուցումը:

Ժենիւի մէջ, իսրայէլեան ուժերը վերաբեցին 14 ամեայ պատանի մը: Անոնք ձերբակալեցին նաեւ երկու պաղեստինցիներ:

Կազա - Եգիպտոս սահմանին վրայ սպաննուեցաւ պաղեստինցի մը, որ թախուս ունեցած էր իսրայէլացի զինուորներու հետ: Պաղեստինեան ազդերները հարգեցին, որ 19 ամեայ թամբա Հե-տաբ սպաննուեցաւ Ռա-ֆահի մօտ: Իսրայէլեան ազդերներու համաձայն պաղեստինցիին գինուած էր զնդացի մը:

Միւս կողմէ, պաղեստինեան իշխանութիւնը պատրաստակամութիւն յայտնեց ընդհանուր զի-

Շարը՝ էջ 3

«ԵՍԵՄՊԼԻ ԶՈԼ»-Ի ՄԵԶ

«ԿՈՄԻՏԱՍ» ԼԱՐԱՅԻՆ ՔԱՌԵԱԿԻ ԲԱՐՉՐՈՐԱԿ ԵԼՈՅԹԸ

2003 տարին Լիբանանահայ Ազգային վարժարաններու տարի հռչակման ծիրին ներս նախատեսուող ձեռնարկներուն առաջինը տեղի ունեցաւ Շաբաթ, 1 Փետրուարի երեկոյեան ժամը 8:30ին, երբ Պէյրուսի Ամերիկեան համալսարանի «Եսէմպլի հոլ» սրահին մէջ ելոյթ ունեցաւ հայրենի անուանի «Կոմիտաս» լարային քառեակը: Ելոյթը կազմակերպուած էր Ազգային Առաջնորդարանի Ոստումական խորհուրդին կողմէ եւ կը վայելէր Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի հովանաւորութիւնը:

«Կոմիտաս» քառեակի անդամներ Էդուարդ Թադէւոսեան (առաջին ջութակահար), Սուրեն Հախնապարեան (երկրորդ ջութակահար), Ալեքսանտր Կոստեան (լայտ) եւ Արամ Թալալեան

Շաբ.՝ էջ 3

ՊԱՐԻԹՈՆ ԳԷՈՐԳ ՔԵՐԵՄԷՅԼԵԱՆԻ ՄԵՆԱՀԱՄԵՐԳՆԵՐԸ

Անցնող շաբաթավերջին լիբանանահայ պարիթոն Գեորգ Քերեմէյեան մատուցեց յոյգ մենահամերգներ, որոնք տեղի ունեցան Շաբաթ, 1 եւ Կիրակի, 2 Փետրուարի երեկոյեան ժամը 8:30ին, «Մոնո» թատերասրահին մէջ:

Չոյգ բաժինէ բաղկացած յայտագիրին ընթացքին Գեորգ Քերեմէյեան տպաւորիչ կերպով մեկնաբանեց Սքարլաթի եւ Վերտի օփերաներէն արիաներ, ինչպէս նաեւ՝ իտալական եւ սպանական երգեր եւ ոտաններ: Յայտագիրին մէջ յատուկ բաժին յատկացուած էր նաեւ հայկական դասական երգերու:

ՄԱՀԱԶԳ

ԼՕՍԻ Շրջանային Վարչութիւնը կը գումար Շրջանային Վարչութեան վաստակաւոր նախկին անդամուհիներէն՝

ՇԱԸԷ ՆԱՀԻԿԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 29 Յունւար 2003ին:

ՄԱՀԱԶԳ

Տիար Վահրամ Նահիկեան
Տէր եւ տիկին Նշան Նահիկեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Երուսեակ Նահիկեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Ճոն եւ Վերա (Նահիկեան) Ներսէսեան եւ զաւակունք
եւ համայն ազգականներ կը գումար իրենց կնոջ, մօր, մեծ մօր եւ հարազատին՝

ՇԱԸԷ ՆԱՀԻԿԵԱՆԻ (ԾՆԵԱԿ՝ ՄԻՆԱՍԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 29 Յունւար 2003, Մանտրէսէրի մէջ, Նիւ Համշաբ, Միացեալ Նահանգներ:
Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Շաբաթ, 1 Փետրուար, Մանչեսթըր, Նիւ Համշաբ շրջանի գերեզմանատան մէջ:

● Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:
● Ցաւակցութեանց համար կապուիլ հետեւեալ հասցէին:
NAHIKIAN
286 Hackett Hill Road
N. H. 03106-U. S. A.
Fax: 603-6456661
Tel.: 603-6416418
E-Mail: YENAHIKIAN@attbi.com

ՄԱՀԱԶԳ

Տիար Գեորգ Մուրատեան
Տիկին Նորա Շիրիլեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Վահէ եւ Անի Պաշտեան եւ զաւակունք
Տիկին Սօսի Մուրատեան եւ զուտորը
Տէր եւ տիկին Էլիաս եւ Լիզա Ալամ
Տէր եւ տիկին Գրիգոր Սարաֆեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Գուրգէն Քէօզլէրեան եւ զաւակունք
էլմայեան ընտանիք
եւ համայն ազգականներ կը գումար իրենց կնոջ, մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝

ԱԼԻՍ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ (ԾՆԵԱԿ՝ ԷԼՄԱՅԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 1 Փետրուար 2003, յետ կարճատեւ հիւանդութեան:
Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Կիրակի 2 Փետրուար, կէսօրուան ժամը 12:00ին, Նոր Հաճընի Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:
● Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին ազգական՝ տիկին Նորա Շիրիլեանի բնակարանը, Մինչէ ֆիլ, Երկուշաբթի 3, Երեքշաբթի 4 եւ Հինգշաբթի 5 Փետրուարին:

ԼԻԲԱՆԱՆՑԻՆԵՐՈՒՆ ՍՕՏ ԿԸ ՏԻՐԷ ՅՈՒՍԱՆԱՐՈՒԹԵԱՆ ՄԹՆՈԼՈՐՏ ՄԸ

Կ'ԸՍԷ Թ. ՍԱԼԱՄ

Նախկին երեսփոխան Թամմամ Սալամ քուէյթեան «Ռայ Աամ» օրաթերթին տուած իր հարցազրոյցին մէջ լոյս կառավարութեան «տկարութիւն»ը

եւ անոր հանդէպ ժողովուրդին նախատեսուած իրաւունքները կը մնան հիմնական պատճառները այս կացութեան:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՎԱՐՉԱՊԵՏ Ռաֆիք Հարիրի երէկ Փարիզի հիւանդանոցներէն մէկուն մէջ ենթարկուեցաւ երկկամերու մէջ քարեր փնջուցելու գործողութեան մը:

Վարչապետ Հարիրի քանի մը օր պիտի մնայ Ֆրանսա ապաքինման շրջան մը ամբողջացունելու համար:

● ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԵԱՆ նախարար Ղազի Արիտի երէկ պատասխանատուներէն պահանջեց հեռու մնալ «հաշիւներ մաքրելու» անհեթեթ երեւոյթներէն, որպէսզի քաղաքական խաղը մնայ բարձր մակարդակի վրայ:

● ԲԱՆԱԿԻ հրամանատարութիւնը երէկ յայտնեց, որ կէսօրէ առաջ ժամը 11:35ին խրախելեան օդանաւեր թռիչքներ կատարեցին Լիբանանի վերէ՝ հարաւէն հասնելով մինչեւ Պէքաա՝ խախտելով ՄԱԿի ճշդած Կապոյտ Գիծը:

● ՍՐԴԱՐՈՒԹԵԱՆ նախարար Սամիր Շարը երէկ յայտնեց, որ ներկայ պայմանները չեն նպաստեր կառավարութիւնը փոխելու աշխատանքին՝ նկատել տալով, որ մեծ տարբերութիւն կայ կառավարութեան բարեկարգման եւ ընդհանուր փոփոխութեան միջեւ:

Շարը ընդգծեց, որ կառավարութեան նստաշրջանը կ'աւարտուի, երբ վարչապետ Ռաֆիք Հարիրի կը ներկայացնէ իր հրաժարականը կամ եթէ կառավարութիւնը իր լման կազմով կը հրաժարի:

ՄԱՀԱԶԳ

Տիկին Մատլէն Սէօքիւնեան
Տէր եւ տիկին Շահէ Սէօքիւնեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին տղթ. Վահէ Սէօքիւնեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Աւետիս եւ Ժուլիէթ Նորիկեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Րաֆֆի եւ Սալբի Արիկեան
Տէր եւ տիկին Միհրան Սէօքիւնեան եւ զաւակունք
Սէօքիւնեան ընտանիք
Տաքէսեան ընտանիք
Ճապոնեան ընտանիք՝

եւ համայն ազգականներ կը գումար իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր, հօրեղբոր եւ հարազատին՝

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԷՕՔԻՆԵԱՆԻ (ԾՆԵԱԿ՝ ՊԵՅՐՈՒՅ, 1929ԻՆ)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 30 Յունուար 2003ին Երեկոյեան ժամը 6:00ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 3 Փետրուար, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Ջալաբաի հայ կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի հայ կաթողիկէ գերեզմանատունը:

● Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը Տըքուանէ, «Սլաւ» թաղ, «Սէլէմ» շէնք, 2րդ յարկ, Երեքշաբթի 4, Չորեքշաբթի 5 եւ Հինգշաբթի 6 Փետրուարին:

ՄԱՀԱԶԳ

Տիար Աբրահամ Պետրոսեան
Տէր եւ տիկին Գրիգոր Տըրոյեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Միմոն Պալճեան
Տիար Պետրոս Պետրոսեան
Տիկին Նուարդ Մարգարեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Աւետիս Մարգարեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Ալպիք Նազգաշեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Յակոբ Գրաճեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Ասատուր Գարամանեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Մովսէս Պետրոսեան
Տէր եւ տիկին Րաֆֆի Պետրոսեան
Տէր եւ տիկին Յովսէփ Աւագեան
Տէր եւ տիկին Մայք Նազգաշեան
Տէր եւ տիկին Րաֆֆի Գարամանեան
Տիկին Ալիս Մանճեան
եւ համայն ազգականներ կը գումար իրենց կնոջ, մօր, մեծ մօր, քրոջ, մօրաքրոջ, հօրաքրոջ եւ հարազատին՝

ԱՐՈՒՍԵԱԿ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ (ԾՆԵԱԿ՝ ՄԱՐԳԱՐԵԱՆ, 1927ԻՆ)

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 31 Յունուար 2003ին կէսօրին, յետ երկարատեւ հիւանդութեան:
Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Շաբաթ, 1 Փետրուար 2003, կէսօրուան ժամը 12:00ին, Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Սէյրաֆի, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Հալէպի Ազգային գերեզմանատունը:
● Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:

ԱԿՆԱՐԿ

«ԱՐԱՐԱՏ»Ը ԱՐԱՐԱՏԻ ՊԵՍ...

Հայկական Յեղասպանութեան դէմ ցցուած վտանգներուն մեծագոյնին աղբիւրը մենք ենք: Անիկա հաւաքական յիշողութեան դանդաղ եւ կանոնաւոր ջնջումն է մեր ուղեղներէն, աօրեայէն, էութենէն:

Որքան տարիներ կը սահին, այնքան էնփին կը հեռանանք Հայկական Յեղասպանութեան արհաւիրքէն, որ մեզ, անոր ցաւն ու տառապանքը ուղղակի մեր մորթերուն վրայ չզգացողներս, կը մղէ հայութեան կողմին տրուած այդ հարուածը դարմանելու եւ արդարութիւն պահանջելու ամէն բանէ առաջ:

Արտաքին ճակատին վրայ արձանագրուած որեւէ յաջողութիւն՝ փոքր կամ մեծ, անտարկէիօրէն մեզ պզովին աւելի կը մօտեցնէ Թուրքիոյ կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչման: Սակայն երբ մենք սկսինք մոռացութեան տալ 1915ի անասանելի ոճիրը, այս կամ այն պատրուակներով եւ չքմեղանքներով այդ ոճիրին տարողութիւնը եւ տեսողութիւնը անգիտանանք, սին եւ անիմաստ են այս կամ այն ճակատին վրայ մեծ պոհողութիւններու արդիւնք ձեռքբերումները: Որովհետեւ Հայկական Յեղասպանութեան հաւաքական յիշողութեան յարստեղծութիւնը այս կամ այն հատուածի մը, կուսակցութեան մը, հոսանքի մը կամ համայնքի մը ոչ պարտականութիւնը ոչ այլ առանձնաշնորհումն է. անիկա համահայկական պահանջատիրութեան ուժ տուող սնունդ է, որ պէտք է ընդունուի մեր կեանքին՝ առանց ընդմիջումներու, որպէսզի արտաքին յառաջխաղացքը բարձրանայ ներքին ամրութեան վրայ:

Այս դիտանկիւնէն Սթոմ Էկոյեանի «Արարատ»ը կը գրաւէ առաջատար դիրք՝ գլխաւորաբար մէկ պատճառով:

Տիկին գնահատականը մասնագէտներուն գործն է: Այս ակնարկը կը վերաբերի Էկոյեանի գործին պատգամին, զոր բոլորս պիտի ընկալենք, բայց մանաւանդ պայն պիտի ստանանք մեր մայրերը:

Ինչո՞ւ:

«Արարատ»ին մէջ կայ կեանքի գիծ մը, որուն բաղկացուցիչ տարրերը յոյգ - յոյգ մայր ու պաւակ են՝ տարբեր սերունդներու պատկանող: Մայրը եւ Արշիլ Կորքին, մայրը եւ Էտուրրոտ Սարոյեան, մայրը եւ Րաֆֆին. եւ այս երրորդութեան առաջնորդը՝ Աղթամարի եկեղեցիին պատիւն ընդունուած Աստուածամայրը՝ իր միածինով. այսինքն դարձեալ մայրը եւ որդին:

Այս մայրերուն իւրաքանչիւրը իր պակին կը փոխանցէ Հայկական Յեղասպանութեան հարանոց, ապրեցնող եւ դարմանող հուրը, ու այսպէս հաւաքական յիշողութիւնը կը սնուցուի: Մայրերը սնուցանողը Աղթամարի Աստուածամայրն է:

Այսօրուան մեր մայրերը սակաւ՝ պիտի ըմբռնեն ու այս մեկնակէտէն ճամբայ պիտի ելլենք:

Թուրքը. հասած կ'ըլլայ իր նպատակին, երբ մայրեր (նաեւ չգկերտաւոր մասնագէտներ) չեն ուզեր մատողաջ սերունդին հոգեկան աշխարհ տակնուվրայ ընել՝ Հայկական Յեղասպանութեան վարչապետները պատմելով, բայց մշիկ - մշիկ կը քնանան, մինչ կողքի սենեակը իրենց մատողաջ պաւակը պոկելի ու արիւնով լեցուն ֆիլմերը ու դէռ ինչէր ըստ կը դիտէ...

Աթոմ Էկոյեան առանց տատամետի մատը իրած է վերքին մէջ ու շատ լաւ ըրած է: Հիմա մեզի կը մնայ այդ վերքը բուժել:

Ա. ԱՊՏԱԼԵԱՆ

ԳՐԱԴՈՒՄ
ՕՐ
ԱՖԵՏԻ
25 ԱՄԵԱԿ
2 ՄԱՅԻՍ 2003

ՄՏՅԱՆՔ
«ԱՂՔԱՏՆԵՐՈՒՆ ԱՒՆԳՈՒԹԻՒՆԸ»
- Բ. -
Շեղինակ՝
ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ
Համազգայինի Վաիտ Սեթեան տպարան
Պէյրուս, 2002

ՇՆՈՐԿԱԿԼԻՔ
● Չուլաքեան, Սիւճեան եւ Թոսուլեան ընտանիքներ շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկապսակով եւ նուիրատուութեամբ մասնակցեցան հանգուցեալին հարազատին՝ ՆԵՐՍԵՍ ՉՈԼԱՔԵԱՆԻ մահուան սուգին:

ՇՆՈՐԿԱԿԼԻՔ
● Տիկին Մատլէն Սեփեթեան եւ զաւակը՝ Գեորգ եւ Սեփեթեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկապսակով եւ նուիրատուութեամբ մասնակցեցան հանգուցեալին հարազատին՝ ՂԱԿԻԹ ՍԵՓԵԹԵԱՆԻ մահուան սուգին:

ԸՈՒՏԹԻ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆԸ
ՎԱՐԻՔԸ ՈՒՆԻ
1.- ՓՈՒՆ ՏՆՕՐԵՆԻ
Ա. Համալսարանական վկայականն ու փորձառութիւնը անհրաժեշտ են:
Բ.- Վարձատրութիւնը՝ ամսական 1000 1200 տոլար եւ տան վարձը:
2.- Հայերէն լեզուի դաստառի
Ա.- Համապատասխան համալսարանական վկայականն ու փորձառութիւնը անհրաժեշտ են:
Բ.- Վարձատրութիւնը՝ ամսական 650 տոլար եւ տան վարձը մասնակի վճարում:
Չեռագիր դիմումը, վկայականի եւ փորձառութեան հաստատագրութեան պատճեններն ու C. V. ուղարկել հետեւեալ հասցեին:
Armenian School
P. O. Box 34434 Adilieh 73255 Kuwait
Fax: 00965 - 5313870

ԹՐԱՏԻ ՀԱՅ ԱՒԵՏ. ՎՐԺ.
ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Թրատի Հայ Աւետ. Վարժարանի 2002-2003 տարեշրջանի, Տիկնաց յանձնախումբին կողմէ կազմակերպուած վիճակահանութեան շահող թիւն է 143: Շահող թիւին տեղը ստացաւ արժեքաւոր նուր մը, յատկացուած տիար Փոլ Այանեանի կողմէ, որմէ մեծապէս շնորհակալ ենք:
ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԼԻԲԱՆԱՆՑԻՆԵՐՈՒՆ ՍՕՏ...

Շարունակում 2րդ էջէն

տակից եւ ոչ ծայրայեղ կեցումներուն նկատմամբ: Ան ըսաւ նաեւ, որ Սուրիա գոհ է նման վերաբերումէ, որպէսզի շարունակուի երկխօսութիւնը եւ ծառայէ երկկողմանի յարաբերութիւններու ամրապնդման:

Յաջորդ կառավարութեան անդամակցելու մասին՝ Սալամ յայտնեց, որ եթէ կառավարութիւնը ծառայէ ազգային գերագոյն շահերու եւ վերջ մը դնէ նեղ հաշիւներու հետապնդումի քաղաքականութեան, երբեք պիտի չվլանայ օժանդակել անոր՝ անդամ դառնալով կառավարութեան:

Սալամ վորակցութիւն յայտնեց վարչապետ Հարիրիի՝ կապմելու իր նոր կառավարութիւնը, որովհետեւ Հարիրի օրով արձանագրուած դրական նուաճումները կը գերազանցեն ժխտականները եւ ատեցուց, որ Հարիրի դրական կարողութիւնները գործի լծելու եւ շինիչ աշխատանք ստեղծելու տաղանդով օժտուած է:

«ԿՈՍԻՏԱՍ» ԼԱՐԱՅԻՆ ՔԱՌԵԱԿԻ...

Շարունակում 2րդ էջէն

(թաւջութակահար) երաժշտական բարձրորակ կատարողութեամբ մեկնաբանեցին Հենտրի. Շուպերի, ինչպէս նաեւ՝ Էտուարդ Միլկոյեանի, Կոմիտասի եւ Բարսեղ Կանաչեանի երաժշտական ստեղծագործութիւնները՝ արժանանալով սրահը ամբողջութեամբ լեցուցած ունկընդիւրներուն ջերմ եւ խանդավառ գնահատանքին:

ՇԱՐՈՆ ԼԾՈՒԱԾ Է ...

Շարունակում Ա. էջէն

Նազուկի մը մասին բանակցելու իտալացի Նետ, ինչպէս նաեւ վերսկսելու խաղաղութեան բանակցութիւններուն՝ քառեակին հովանաւորութեամբ ու հակողութեամբ: Պաղեստինեան իշխանութիւնը գարմանք յայտնեց, որ իտալացի կը մերժէ վերսկսել խաղաղութեան բանակցութիւններուն՝ նախընտրելով զինուորական գործողութիւններու ուղին:

Եզրագծով նախագահ Հիւսէն Մուպարաբ իր կարգին Գահիրէի մէջ հանդիպումի մը հրահրած է իտալացի վարչապետ Արիէլ Շարոնը, խորհրդակցելու համար Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը վերակենդանացնելու կարելիութիւններու մասին: Ըստ «Արպար Ետում» Շարոնի գրասենեակը հաստատած է հրահրելու լուրը:

● ԱՌԹԻՎԻՆԻ ԹՈՒՆԿԱՆ ԵՐ ՍՏԻՎԵՆԻՆ ԶԵ ԸՂԴՆԱԾ ԵՐ ԻՎԿԱՂԵՍԻՆԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ, որոնց առաջին փուլը ձախողած էր անցեալ շաբաթ Գահիրէի մէջ: Պաղեստինեան ալլազան շարժումներու ներկայացուցիչներ չէին յաջողած լուծել իրենց տարակարծութիւնները:

(ԱՅՓ)

ՉՕՐ. ԼԱՀՈՒՏ ՄՈՒՍԱՅԻ ՀԵՏ ...

Շարունակում Ա. էջէն

տամ Հիւսէյնի արտաքին մասին ոչ մէկ քննարկում եղած է արաբական պաշտօնական շրջանակներու մէջ, իսկ իրաքի մէջ իշխանութեան հարցը կը վերաբերի իրաքցի ժողովուրդին:

Իր կարգին, Համմուտ յայտնեց, որ արաբական աշխարհը կառչած կը մնայ Պէյրութի մէջ գումարած արաբական վեհաժողովին որոշումներուն, որոնց հիմամբ, կը մերժուի որեւէ արաբական երկրի վրայ յարձակում, որոնց շարքին՝ նաեւ Իրաքի վրայ, ինչպէս նաեւ կը պահանջուի ՄԱԿի որոշումներուն գործադրութիւնը:

Նախագահ Լախուտ յոյս յայտնեց, որ արաբ արտաքին գործոց նախարարներուն ժողովը, կ'ըլլայ արդիւնաւետ եւ կ'ամրապնդուի արաբական համագործակցութիւնը՝ դիմագրաւելու համար Իրաքի դէմ ցցուած մարտահրաւերները:

Նախագահ Լախուտ յայտնեց, որ որեւէ ժողովի կամ վեհաժողովի ընթացքին հարկ է որդեգրել արաբական միացեալ կեցումը՝ Իրաքի տագնապին նկատմամբ: Նաեւ պետք է պարտադրել ՄԱԿի Ապահովական Խորհուրդի որոշումները եւ կառչած մնալ տագնապին խաղաղ լուծումներ ապահովելու միջոցներուն՝ հեռու մնալով մենատիրական պիտուորական գործողութիւններէն, որոնք կը վտանգեն միջազգային խաղաղութիւնը:

Նախագահ Լախուտ վերահաստատեց, որ արաբական որեւէ երկրի վրայ յարձակում կը նկատուի յարձակում մը արաբական աշխարհին վրայ:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀՄՄԱՍՄԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ
ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

ԸԱՅ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԿԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՐ ՇԱՐԱԿԱՆԵՐԳՈՒԹԻՒՆ.
ՓՈՒՆԱԴԱՐՁ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐ

Դասախօս՝
ԱՆՆԱ ԱՐԵՎՅԱՏԵԱՆ
(Երաստանի Ընդհանուր Գիտութիւններու Ազգային Ակադեմիա, Արուստի Հիմնարկ)

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 4 Փետրուար 2003, երեկոյեան ժամը 7:30ին, Երաստանի համալսարանի հանդիսարանին մէջ, «Մեխակեան» շէնք, «Մերսի» փողոց:

Հ.Յ.Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՄԱՐՄԻՆԸ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

ARMENIA: THE BETRAYED

(BBC2 ԿԱՅԱՆԻՆ ՊԱՏՐԱՍՏԱԾ ԸԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԿԱԲԵՐԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ԺԱՊԱԲԵՆԸ)

Հեղինակ՝ **ՖԵՐԿԵԼ ՔԻՆ**
Բեմադրիչ՝ **ՃԵՅՄՍ ՄԻԼԸՐ**

Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 6 Փետրուար 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «Յակոբ Տէր Մելրոնեան» քաղերասարանին մէջ:

A Film by Atom Egoyan Showing at Planete Abraj Theatre

Friday, February 7th, 2003 @ 8:00 p.m.
Organized by:
Lebanese- Armenian Heritage Club of AUB
Association des Etudiants Arméniens de l'USJ
Heritage Club of HU
Armenian Students of LU
Armenian Students of LAU
Armenian Students of NDU
Armenian Students of AUST
Etudiants Arméniens de l'USEK

ARARAT

Special Price: 5500 L.P.

السفير
الصحراء
البيروت
الاستقبال
الامارات

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Տեղական մամուլը իր 1 Փետրուարի թիւով անդրադարձած է բջիջայինի հարցին՝ առնչուող վերջին իրադարձութիւններուն, վարչապետ Հարիրիի Վատիկան այցելութեան, ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին կողմէ Իրաքի դէմ պատերազմը կասեցնելու շարունակուող ճիգերուն եւ պաղեստինցիներուն դէմ իսրայելեան բռնարարքներուն սաստկացման:

«Լիւնա» գրած է, թէ նախագահ Լախուտի ընդհանուր իրադարձութիւններուն պատկերը ներկայացնել է տեղ, վարչապետ Հարիրիի Փարիզ մեկնեցաւ. Պապին հետ տեսակցել է տեղ Հարիրի ըսաւ, թէ այցելութիւնը դրական արդիւնք պիտի ունենայ միացեալ եւ խաղաղ համակցութեան համար:

Ըստ «Մուսթաքպալ»-ի, Հարիրի կը հաստատէ, թէ հետամուտ է իրաւունքներուն միջեւ միասնականութեան կայացման: Թերթը նշած է, թէ պապը մտահոգ է Իրաքի եւ Պաղեստինի հարցերով. «Լիւնան» յատուկ տեղ ունի իմ սրտիս մէջ», յայտարարած է պապը:

«Տիւրք» գրած է, թէ «Լիւնան»-ը ընկերութիւնը ստորագրեց, իսկ «Սելիա»՝ մերժեց եւ բջիջայինի մարզը նոր շրջան մը թեւակոխեց: Թերթը հարց կու տայ, թէ ի՞նչ կը նշանակէ բջիջայինի սեփականութեան իրաւունքներու ընկերութեան անցնիլը: Ըստ թերթին, «Լիւնան»-ը 78 միլիոն տոլար, իսկ «Սելիա»՝ չէ ուզած գանձել, այսպիսով Կեղրոնական դրամատան մէջ պահելով 112 միլիոն տոլար:

«Նահար» նշած է, թէ արաբական պետութիւնները ընդառաջեցին Լիւնանի կողին՝ արտաքին գործոց նախարարներու ժողով մը գումարելու: Ըստ «Սաֆիր»-ի, Արաբական Լիգայի նախագահ Ամր Մուսա Կիրակի օր Պէյրութ կը հասնի, իսկ արտաքին գործոց նախարարներուն հանդիպումը տեսիլ պիտի ունենայ Գահիրէի մէջ:

Իրաքեան հարցին մասին «Նահար» գրած է, թէ Միացեալ Նահանգներու նախագահը Պաղեստինը անգամ ըլլալով առնչեց 11 Սեպտեմբերի դէպքերուն: «Պատերազմի Խորհուրդ»՝ նախագահ Պուշին եւ Պէրի միջեւ. Սատամի քանի մը շաբաթ ժամանակ կը տրուի ապաւինուելու համար», նշած է օրաթերթը:

«Սաֆիր»-ի համաձայն, Պիքս եւ Պարատի գրաւի կու գան, թէ կրնան ամենայն հանգստութեամբ տեսակցիլ նախագահ Սատամի հետ, իսկ Թուրքիա կը պատրաստուի իր հողերը տրամադրելու: Ըստ թերթին, Պուշ եւ Պէր դէմ չեն միջազգային որոշումներուն՝ պատերազմ սկսելու վերաբերեալ:

«Մուսթաքպալ»-ի համաձայն, մինչ իւրաքի ապաւինական

չանքեր ի գործ դրուած են պատերազմի մը առաջը անելու համար, Պուշ եւ Պէր կը յայտարարեն, թէ Սատամ չէ ապաւինուած եւ այս հարցը շաբաթներու ինդիք է եւ ամիսներ պիտի չտեսէ:

«Լիւնա» գրած է, թէ Պէրի հետ ունեցած իր հանդիպումէն ետք Պուշ յայտարարեց. «Սիրով կ'ընդունիմ այլ որոշում մը ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին, եթէ անիկա Իրաքի ուղղուած խիստ շեշտ ունենայ»: «Տիւրք» նշած է, թէ նախագահներ Սատամ եւ Մուսթաքպալ հեռաձայնային հաղորդակցութեան մը ընթացքին քննարկեցին Իրաքի պատերազմին առաջը անելու հարցը:

«Անուար» գրած է, թէ ամերիկեան եկեղեցիներ կը միանան պատերազմը կասեցնելու Վատիկանի կոչին: Ըստ թերթին, Պիքս կը ժխտէ Միացեալ Նահանգներու կողմէ Իրաքի ուղղուած ամբաստանութիւնները:

Թերթը գրած է, թէ մասնագէտներ կը նախատեսեն, որ պատերազմը կ'աւելնայ մը շաբաթէն եւ աւարտի Յունիսին:

Պաղեստինեան հարցին առնչութեամբ «Տէյլի Սթար» գրած է, թէ Իսրայել կը շարունակէ պաղեստինցիներ ապանել, ձեռքաւորութիւններ կատարել եւ բնակարաններ քանդել:

«Տիւրք»-ի համաձայն, խաղաղութեան քարտէսը պիտի լեւտեալ մկսի քանի մը ամիսով, իսկ Շարոն սկսաւ խորհրդակցութիւններուն, պանսկան կողմերու հետ:

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՅԻ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այս տարի Ս. Սարգիս տօնը կը հանդիպի Կիրակի, 16 Փետրուարին. ինչպէս նախորդ տարիներուն, այս տարի եւս պիտի կատարուի մատաղործները:

Բոլոր այն հայրենակիցները, որոնք Ս. Սարգիս տօնին առիթով ուխտ ունին եւ կը փափաքին մատաղու ոչխար նուիրել, թող հաճին կապ պահել Ս. Սարգիս եկեղեցւոյ թաղականութեան անդամներուն հետ՝ հեռաձայնելով 01-259861 թիւին եւ կամ անձամբ ներկայանալ գրասենեակ, ամէն օր, բացի Շաբաթ օրերէն՝ ժամը 9:00էն 12:30:

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՅԻՈՅ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հ.Բ.Բ.Մ.Ի ԼԵՒՈՆ Կ. ՆԱԶԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ԾԱՂԿՈՑ

- Վարժարանը կ'ընդունի երեխաները, Երեքշաբթի, 4 Փետրուար 2003էն սկսեալ:
- Փոխադրուելու ապահովում է բոլոր շրջաններուն համար:
- Վճարում՝ ամսական 50,000 Լ.Ո. (առանց փոխադրութեան):
- Ընտանոցները կրնան դիմել քարտուղարութեան կամ մանկապարտիզպանուի տիկին Թալին Մարգարեանին:
- Ըեռ. 01/481319 եւ 01/484196

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ


ԼՕԽԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Բեմադրիչ՝ **ՆԱՐԵԿ ՏՈՒՐԵԱՆ**
Լիբանանի մէջ կը ներկայացնէ
«WELCOME TO GLENDALE»
կատակերգութիւնը 2 արարով

Ուրբաթ. 7 Փետրուար 2003. ԿԱՍՍ.
Շաբաթ 8 եւ Կիրակի 9 Փետրուար 2003. երեկոյեան ժամը 8:30ին.
Կիրակի 9 Փետրուար 2003. ցերեկոյ. կէսօրը ետք ժամը 4:00ին.
«Յակոբ Տէր Մելրոնեան» քաղերասարանին մէջ:
Տնօնէրը տանալ՝ ԼՕԽ-ի Չեռապոլիտիկ խանութը.
Համագայիցի զրատումը. Anto Sport-էն.
Longline Կատարութիւն - Վալէ Աղամեան - Ժայ Էլ Տիպ.
Գրատուն Կոմիտաս - Zokak El Blat.
ԼՕԽ-ի Շրջանային Վարչութեան Գրասենեակէն:

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:



ՅՈՒՐՈՆԹՈ

ԿԸ ՄԵՐԺԵՄ ԶԳԱԼ ԱՅՆ ՎԱԽԸ, ԶՈՐ ՄԵԾ ՀԱՅՐԵՐՍ ՈՒ ՄԵԾ ՄԱՅՐԵՐՍ ԶԳԱՑԻՆ 1915ԻՆ

ՆԱԽԱԳԱՀ ԲՈՊԵՐԹ ԲՈՉԱՐԵԱՆԻ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶԸ՝ ԲԱՆԱԿԻ ՕՐՈՒՄՆ ԱՌԻԹՈՎ

Սիրելի՛ հայրենակիցներ, Ձեզ կը շնորհակալեմ՝ բանակի օրուան առիթով: Ասիկա մեր փառապանք գինուրականութեան մասնագիտական տունը ըլլալէ գատ, համաժողովրդական տուն է, որ հպարտութիւն կը ներշնչէ իւրաքանչիւրիս:

Հայկական բանակը ձեւաւորուեցաւ պատերազմի բովին մէջ: Արցախեան ազատամարտին ընթացքին հերոսացած ինքնապաշտպանութեան ջոկատներուն հիմքին վրայ կազմուեցան Հայաստանի կանոնաւոր բանակին առաջին ստորաբաժանումները, որոնք պատուով անցուցին ժամանակի բնուրթը: Անկախ պետականութեան եւ ազգային բանակի կայացման համարուն վրայ իրենց կեանքը նուիրեցին բազմաթիւ հայրերի, որոնց սիրանքը անմահ է եւ յիշատակը՝ վառ:

Այսօր Հայաստանի զինեալ ուժերը յստակօրէն կը կատարեն իրենց առաքելութիւնը՝ կիրականացնելով Հայրենիքի սահմաններուն եւ խաղաղութեան պաշտպանութիւնը: Անոնք մեր ժողովուրդին անվտանգութեան գլխաւոր երաշխիքն են եւ շրջանային կայունութեան, անփոխարինելի գործօնը:

Տարուէ տարի կը բարձրանայ հայկական բանակին մարտունակութիւնը եւ թեքնիք ապահովուածութիւնը, ինչ որ արդիւնք է հայ զինուորներուն անձուկեղ աշխատանքին եւ իշխանութիւններուն ամէնօրեայ ուշադրութեան: Հայաստանի զինեալ ուժերու յարգելի զինուորներն են սպաներ, որք արժանի կերպով կը վայելէք մեր ժողովուրդին սերն ու վստահութիւնը եւ ամէն օր, ամէն ժամ կ'արգարացնէք այդ վստահութիւնը՝ ապահովելով մեր հայրենիքի սրբազան սահմաններուն անձեռնմխելիութիւնը:

Կրկին շնորհակալելով այս մեծ տօնին առիթով, մեր բանակին ու ամբողջ ժողովուրդին կը մաղթեմ խաղաղ երկիրք եւ ստեղծագործ աշխատանք, որ նախապայմանն է յառաջիկայ մեր բոլոր նուաճումներուն:



Վերջերս թորոնթոյի Հայ կեդրոնի սրահին մէջ, գաղութին մէջ գործող 26 կազմակերպչական թիւներու մասնակցութեամբ, «Երեկոյ մը Արարատի աստղերուն հետ» բնութագրուած ձեռնարկին, երբ հանդիսատես մը հարց տուաւ, թէ թուրքերու կողմէ դրսևերու անձեռնմխելիութիւնը ունեցան «Արարատ» շարժապատկերին եւ անոր բեմադրիչին վրայ, Աթոմ էկոլոյան պատասխանեց: «Ես կը մերժեմ զգալ այն վախը, որ մեծ Հայրենիք ու մեծ մայրերս զգացին 1915ին»: Այս հաստատումն էն առաջ, Արարատի ինքնապաշտպանութիւնը (Աթոմի կողակիցը եւ գործակիցը), խոստովանեցաւ, որ երբ Աթոմ որոշեց Հայկական Ցեղասպանութեան եւ

այսօր ապրող հայերուն վրայ անոր ունեցած ազդեցութեան վրայ շարժապատկեր մը պատրաստել, իր առաջին հակազգեցութիւնը հրճուանքի եւ սարսափի խառնուրդ մը եղած էր եւ ան դիմած էր Աթոմին, որ յետագայէ այդ որոշումը, նկատի ունենալով այս նիւթին շուրջ ակնկալելի հակազգեցութիւնը, որ կրնար վնասել Աթոմի ասպարէզին: Աթոմ գնահատելով Արարատի անկեղծութիւնը, ըսած է, որ միակ վախը, որ ինք ունեցած է, չլսուելու եւ չհասկցուելու վախն է: Ձեռնարկին բացման մէջ առաջ, Արարատի ինքնապաշտպանութիւնը (Աթոմի կողակիցը եւ գործակիցը), խոստովանեցաւ, որ երբ Աթոմ որոշեց Հայկական Ցեղասպանութեան եւ

մէջ, Աթոմի կողքին ֆիլմի երաժշտահանը՝ Մայքըլ Տանա, նկարչութեան պատասխանատուն՝ Փօլ Սորոսի, հանդերձաւորման պատասխանատուն՝ Պէթ Փաստերնաք, տեքստի պատասխանատու՝ Ֆիլիփ Պարզըր, խմբագրող՝ Սուզըն Շիրքըն, ձայներու պատասխանատու՝ Սթիվըն Մընրօ եւ արտադրիչներէն Սանտրա Քանինկհամ խօսեցան իրենց փորձառութիւններուն մասին:

Խօսք առաւ Կարէն Պոյաճեան (թորոնթօ ծնած եւ հոն ապրած) 15 տարեկան պատանին, որ երիտասարդ Արշիլ Կորքիի դերը ստանձնած էր, անդադարձաւ շարժապատկերի ազդեցութեան, իր վրայ, որպէս երիտասարդ դերասան եւ որպէս հայ ու նշեց իր ծնողներուն միջոցաւ եւ պնդումով սորված էր հայերէնը, որ պատճառ հանդիսացած էր իր դերը ստանձնելուն:

Դաւիթ Ալբայ, «Արարատ»ի գլխաւոր դերերէն Ռաֆֆիի տիպարը մարմնակերպողը, պատմեց դրուագները, զանազան ֆեստիվալներէ: Դաւիթ թորոնթոյի համալսարանի

նի աշակերտ է եւ այս իր առաջին դերասանական ելոյթն է: Ռաֆֆիի դերին համար, լաւագոյն դերասանի թեկնածու է ան՝ 13 փետրուարին կայանալիք քանատական շարժանկարի «Ճին» մրցանակաբաշխութեան:

Արարատի ինքնապաշտպանութեան, Անիի դերով, խօսեցաւ եւ ներկաներուն հետ բաժնեց իր մտաւախութիւններն ու ուրախութիւնը եւ նշեց որ «Արարատ»ը

ամբողջութեամբ Աթոմի իրագործումն է եւ իր բաժինը միայն անուղղակի է: Ան ըսաւ նաեւ, որ իր սերունդը, որպէս պարտականութիւն մօտեցաւ ֆիլմը յուզող նիւթերուն եւ մարտահրաշխանութեան, որ ոչ թէ որպէս պարտականութիւն, այլ սեփական ընտրութեամբ պրպտեան, իմանան, եւ զիտնալով իրանս:

Շարլ Էջ 10

ՀԱՅԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՆՑԵԱԼ ՏԱՐՈՒՄՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԸ ԹԻՒԵՐՈՎ

Ըստ Հայաստանի առեւտուրի եւ տնտեսութեան զարգացման նախարար Կարէն Ճշմարտեանի, անցեալ տարի 12,9 առ հարիւր տնտեսական ընդհանուր աճի պայմաններուն մէջ, համախառն ներքին արդիւնքի ընդհանուր կառուցուածքին մէջ տնտեսական իրական հատուածը 1,4 տոկոսային կէտով աւելցած է: Նախարարը ըսաւ, որ հասարակաշխուհութիւններու մարգէն թեքած է ղէպի տնտեսութեան իրական հատուածը, որուն շնորհիւ նախնական տուեալներով, 15,6 առ հարիւրով աւելցած է փոքրաքանակ ապրանքային շրջանառութիւնը, 10,7 առ հարիւրով՝ բնակչութեան իրական եկամուտները, իսկ 10 առ հարիւրով՝ աշխատավարձը: Սակայն այս բոլոր դրագրեալն եւ յուսադրող ցուցանիշները տակաւին մեծ փոփոխութիւն չեն յառաջացուցած բնակչութեան ընկերային կեանքին մէջ:

2002 թուականին մէկ հոգիի եկամուտը աւելցած է տարեկան 66 տոլարով: Աճ արձանագրուած է նաեւ աշխատատեղերու թիւին մէջ՝ մօտ 32 - 35 հազար, որմէ 19 հազարը՝ փոքր եւ միջին ձեռնարկատիրութեան մարգէն մէջ:

Ըստ նախարար Կ. Ճշմարտեանի, անցեալ տարի, 2001 թուականի համեմատութեամբ արտաքին առեւտուրի շրջանառութեան ծաւալը աճած է 33,8 առ հարիւր, իսկ այդ աճին 48,4 առ հարիւրը կը կազմէ արտահանումը: Նախորդ տարուան համեմատութեամբ, 48,1 միլիոն տոլարով կրճատուած է արտաքին առեւտուրին բացը:

2002 թուականին արդիւնաբերութեան աճը կազմած է 24,2 առ հարիւր: Վերամշակուող արդիւնաբերութեան կառուցուածքին մէջ ոսկերչական արտադրութիւններու վերամշակումը կը կազմէ 9 առ հարիւր, հիմնականը՝ 53 առ հարիւր, սնունդի արդիւնաբերութիւնն է:

Կարէն Ճշմարտեան յայտնեց, որ 12 առ հարիւրով կրճատուած է ներածուող ապրանքներուն ծաւալը, որուն պահանջը կը բաւարարուի սեփական արտադրութեամբ:

Անցեալ տարուան 9 ամիսներուն, 2001 թուականի համեմատութեամբ, 24 առ հարիւրով աճ արձանագրուած է նաեւ զբօսաշրջութեան մարգէն մէջ: Զբօսաշրջիկներուն ընդհանուր թիւը կազմած է 112,849 հոգի:

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹԻՒՆԸ՝ ՆՈՐ ՏԱՐՈՒՄՆ ՏՈՒԵԱԼ ՆԵՐՈՎ

1 Յունուարի դրութեամբ «Հայաստանի զբաղուածութեան ծառայութիւն» գործակալութեան տարածքային կեդրոններ զիմած է 154,071 հոգի, որ 5,4 առ հարիւրով պակաս է նախորդ տարուան նոյն ժամանակաշրջանի ցուցանիշին:

Անոնցմէ 8473 հոգին աշխատանք գտած է, իսկ 83 առ հարիւրը կամ 127,331 հոգի ստացած է գործազուրկի կարգավիճակ: Գործազուրկներուն 67 առ հարիւրը կիներն են:

1 Յունուարի դրութեամբ Հայաստանի մէջ գործազուրկութեան մակարդակը 9 առ հարիւր է, ինչ որ 0,8 տոկոսային միւտուրով պակաս է նախորդ տարուան նոյն ժամանակաշրջանի ցուցանիշին:

Երեւանի մէջ գործազուրկութեան մակարդակը նուազած է 1,3 առ հարիւրով եւ կը կազմէ 8,5 առ հարիւր:

ՕՏԱՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՈՒ ԱՃ


Ըստ Հայաստանի առեւտուրի եւ տնտեսական զարգացման նախարարութեան անցեալ տարուան հաշուետուութեան, Հայաստանի մէջ ինք մասուէն ընթացքին կատարուած են 122,7 միլիոն տոլարի օտար ներդրումներ, ինչ որ 26,3 առ հարիւրով աւելի է, քան՝ 2001 թուականի նոյն ժամանակաշրջանի պատկերը: Օտար ուղղակի ներդրումներուն ծաւալը կազմած է 70,9 միլիոն տոլար՝ 2001 թուականի համեմատութեամբ 12,1 առ հարիւրով աւելի:

Պէտք է նշել, որ 2001 թուականի ինք ամիսներու համեմատութեամբ՝ անցեալ տարուան նոյն ժամանակամիջոցին, առանց սեփականաշնորհման միջոցներու հաշուարկման, օտար ներդրումներուն ընդհանուր ծաւալը աճած է 72,5 առ հարիւրով, իսկ օտար ուղղակի ներդրումներուն՝ 79,4 առ հարիւրով:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ ԱՊՐՈՒՄՆԵՐ»

«Հ.Մ.Ը.Մ.ը անոնցմէ է, որոնք միայն կ'որոնեն կաշիի կտորի մը ետեւէն կը վազեն եւ կ'ապրին անոր յաղթանակներով ու կը քայքայուին անոր պարտութիւններով: Միջան պարզապէս ֆուլթուրը իրեն միջոց կը ծառայեցնէ իր վստահութեան նպատակներուն իրագործման ճամբուն վրայ: Հ.Մ.Ը.Մ.ը, ինչպէս ըսինք, լոկ միտութիւն մը չէ: Ան հաւատամբ մըն է բառին բուն իմաստով. հաւատամբ մըն է, որ Հայկի օրով կար, հաւատամբ մըն է, որ Մեծն Տիգրանի օրով կար, հաւատամբ մըն է, որ Մարտի 28ի օրով կար, հաւատամբ մըն է, որոնք լոյս առ հայ ժողովուրդին լուսապայծառ հոգիներուն սկուռեքն կը ըլին, իսկ որոնք սէրը Հայաստանեայց աստուածակերտ եկեղեցւոյ հոգեգրուած բուռնութեան մէջ կը ինկարկեն» (Մեծն պիտի վառենք կրակը): «Արեւելք մարզաշխարհ», Յունուար, 1959):



Մկրտիչեան եւ իր բնական իրենց վարչական պատասխանատու, միշտ ալ ինքզինք մօտ զգացած է ֆուլթուրին: Այս մասին Սամուէլ Մկրտիչեան «Ազդակ»ի Նոյեմբեր 1987 թուականի թիւերէն մէկուն մէջ իր ստորագրած «Հին մարդիկ, հին յիշատակներ» յօդուածին մէջ կը գրէ. «Փոքր տարիքէս ֆուլթուր սիրած եւ ֆուլթուրին հետեւած մարդ եմ: Այդ ճամբուն երկայնքին ունեցած եմ նիւթական սկառուտներուն ու մարդիկներուն՝ իր հիմնադրութեան միջոցով օրս: Հ.Մ.Ը.Մ.ը Սամուէլ Մկրտիչեանի համար նախ եւ առաջ ազգային դպրոց մըն է, որ իր անդամներուն կը փոխանցէ Տարոն աշխարհի եւ Սասնայի ազգային ոգին, որ իր անդամները կը թրծէ Գէորգ Չաւուչի ու Աղբիւր Սերոբի օրինակներով:

Գիրքին մէջ յոյս տեսած գրութիւնները յօդուածներ են՝ հրատարակուած հայ մամուլին մէջ, ինչպէս՝ «Արեւելք մարզաշխարհ», «Ազդակ», «Ասպարէզ» եւ «Մարդիկ»: Գիրքին մէջ լոյս տեսած Սամուէլ Մկրտիչեանի առաջին յօդուածը՝ «Խօսք առ Հայաստան» առաջին անգամ յոյս տեսած է Փարիզի «Յառաջ» օրաթերթին մէջ, 1946ին:

Սամուէլ Մկրտիչեան գիրքին մէջ հրատարակուած բոլոր յօդուածներէն մէկը կը խօսի այն կողմէ մշակուած յուշագրութիւններուն: Եւ ասանակ, մէկ տարուան

խանցած է իր շարքերէն անցած բազմազան սկառուտներուն ու մարդիկներուն՝ իր հիմնադրութեան միջոցով օրս: Հ.Մ.Ը.Մ.ը Սամուէլ Մկրտիչեանի համար նախ եւ առաջ ազգային դպրոց մըն է, որ իր անդամներուն կը փոխանցէ Տարոն աշխարհի եւ Սասնայի ազգային ոգին, որ իր անդամները կը թրծէ Գէորգ Չաւուչի ու Աղբիւր Սերոբի օրինակներով:

Կարելի է հպարտութեամբ չկարգալ Սամուէլ Մկրտիչեանի յուշերը՝ 1940ական, 1950ական եւ 1960ական թուականներուն Հ.Մ.Ը.Մ.ի մարզական իրագործումներուն մասին, մանաւանդ որ ան իր կեանքին 69 տարեկանում իր անդամները կը թրծէ Գէորգ Չաւուչի ու Աղբիւր Սերոբի օրինակներով: Ան իր Հ.Մ.Ը.Մ.ական գործունէութիւնը կը սկսի Հայաստանի հետադարձ անցնելու համար Լիբանան, ապա Միացեալ Նահանգներ: Ու իր հասարակական եւ մարզական կեանքի երկար տարիներուն ընթացքին Սամուէլ

Աշակուբայի Էջ

ՔԱՅԼ ՊԱՀԵԼ ՄԻՉԱՉԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԳԱԿԻՆ ՀԵՏ

Կազմակերպության մարմինը Լիբանանի մշակութային յանձնախումբին եւ գործակալությանը Լիբանանի կերպարուեստագետներու միության, իր տեսակին մէջ ուշագրաւ քանդակային խմբային ցուցահանդէսի մը բացումը տեղի ունեցաւ 20 Յունուարի երեկոյան, ԵՆՒՆԵՍԿՕ-ի զօյգ ցուցասրահներուն մէջ: Յուշարձաններու գրուած են քառասունհինգ կերպարուեստագետներու հարիւր յիսունէ աւելի ստեղծագործութիւններ:



Պոթ՝ Սուխամատ Կաֆֆարի

ՀԱՅՐԵՆԻՔԸ ԾՆԻՈՒՄ Է ՄԱՐԴՈՒ Է ԿԵՏ

Չափեմ խաչատրեան հայրենի արուեստագետներու ծանօթ դէմքերն է: Ան մեծ վաստակ ունի նաև հայրենի թանգարանային - մշակութային գործունէութեան մէջ: «Հայրենիքը ծնունդ է մարդու հետ» ստորեւ տրուած անոր մէկ յօդուածը նման վրայ կը դնէ 20րդ դարու հայ գեղանկարչութեան երկու հսկաները՝ Մարտիրոս Սարեանը եւ Արշիլ Կորքի - Աղոյեանը, որոնք հայրենասիրութեամբ տաղուած՝ ստեղծեցին երկու ուրոյն հասանքներ, առաջինը՝ հայրենիքի, երկրորդը՝ հայրենիքէն դուրս, Մ. Նահանգներու մէջ:

Ինչպէս ամէն արուեստագետ իր անելիքն ունի, այնպէս էլ՝ ամէն ժողովուրդը, որեւէ եւ այն ժողովուրդը, որին պատկանում է այդ արուեստագետը: Այս կապը արտացոլում է ձեւի մէջ, որ բնորոշում է ստեղծագործութեան ազգային նկարագրով:

Վ. ԲԱՆՏԻՆՍԻ

Անցած դարակազմի քաղաքական փոփոխութիւնները, ինչպէս որ լեռն է կիսուում, կիսեցին մեր ժողովուրդին երկու հատածի: Մայր հողի վրայ, ստեղծագործող անհատի ու հայրենասիրի միջև, ինչպէս բոլոր յեղափոխութիւններից յետոյ, շատ շուտով բարձրացաւ միահեծան վարչաձեւի պարսպը: Իսկ Սփիւռքում արուեստի մարդը կտրուեց իր արմատներից: Հայաստանում ապրող արուեստագետից ինչեցին ազատութիւնը, իսկ դրսում՝ ազատութեան մէջ ստեղծագործողը զրկուեց հայրենիքից: Ծակատագրական այս ողբերգութիւնն անդրադարձ պիտի գտնէր հոգեւոր կեանքում: Եւ ինչպէս:

Դարի առաջին տարիներից եւրոպական մշակութային միտքը սեւեռուեց դէպի Հին քաղաքակրթութիւնները՝ ոճական նոր սկզբունքներ հաստատելու միտումով: Նոյնը տեղի ունեցաւ մեր ազգային մշակութի մէջ: Բայց դարու առաջին տարիները ունեցող ժողովրդի համար դա հասունացած, բնական պահանջ էր: Եւ Հայ հոգեւոր կեանքի բոլոր մարգերում իր յատկանայն արուեստը մշակուողները, ովքեր բերեցին նոր մտայնութեան, ճարտարապետութեան ու բանաստեղծութեան ազգային իւրակերպութիւնը: Նկարչութեան ասպարէզում այդ ինչիւրեք սկզբնակարգները էր կոչուած Մարտիրոս Սարեանը: Նա եւրոպական դպրոց անցած Հայ նկարչներին առաջինը եղաւ, որ արագ ու ամբողջապէս խզեց կապերը սերտած մեթոտներից, ընթացաւ ինքնուրոյն ճանապարհով՝ երանգապնակը պարզելով հայրենի բնաշխարհին ու արուեստին: Հայրենիքի մտաշին ներշնչումներից ծնուեց երկտասարդ նկարչի «Հեթիմներ» ու երազների՝ «Արարատի ստորոտին», «Թագաւորը դստեր հետ», «Աղբիւրի մօտ», «Ախուրեանի ձորում» ու այլ գործեր իրենց ոճաձեւական կառուցումներով ու բանաստեղծութեամբ:

Լոնտոնում (երկրորդ յետապաշարապաշտական ցուցահանդէս), 1914ին՝ Շուէտում:

1915ին, սակայն, թողնելով փառք ու ճանաչում, նկարչը փակուեց մոսկովեան արուեստանոցի մէջ: Ինչպէս որ համաճարակի գոհ էին դառնում հարկուրու մարդիկ՝ ծերեր ու մանուկներ: Փոքրերի հոգսով ու խնամքով զբաղուած նկարչը, ով գիտէ, զուցէ հանդիպել է մի պատանու, որ տասնամեակներ անց Ամերիկայում դառնալու էր արդի արուեստի նշանաւոր դէմքերից մէկը:

Մահուան արշաւից տուալտով Սարեանի հոգին ցնցուում է, նրան տեղափոխում են հիւանդանոց: Ընդհատուած է նկարչի ստեղծագործական ընթացքը:

Բայց Սարեանը չի դիմում տարագրութեան: Նա իր կեանքը կապում է կիսուած հայրենիքի այն հատուածին, որի վրայ սկսեց ծլարձակել վերադարձի ստեղծագործական ընթացքը:

Սակայն հայրենիքին, նկարչին նոր փորձութիւններ ու ցաւեր էին սպասում, որոնք նա պիտի կրէր իր մէջ որպէս մորմոք: 1937ին թանգարանի բակում այրելու էին նաև նրա գործերը, ինքը պիտի քննադատութի խորհրդային մշակութային մեծերի հետ, պիտի ձեւապաշտ համարուէր: Բայց տոկալու էր եւ աշխատելու ամէն գնով: Չէր սասանուելու նրա ոգին, ինչպէս եւ ժողովրդի ոգին, քանզի խաբսխուած էին սեփացող երկրին՝ «Երկիրը մարդ է, մարդը՝ երկիր» հաւատամքով:

Առաջին աշխարհամարտի սարսափների շունչը հողմի նման տարածուեց աշխարհում: Արուեստում ծնունդ առաւ գերիարակչութեան թիւնը: Եղեռնից փրկուած անթիւ որբեր, հանգրուան գտան հեռակիր փաստացի կայ, իր կրթի վրայ պահուած է, ճիշդ է, մի բուռ, բայց աշխատանքը ու տաղանդաւոր մի ժողովուրդը, իր հերոսական պատմութիւնը խորհրդանշող հոգեւոր բազմադրեան արժէքներով:

Երկրի վերածննդի, հայրենիք կառուցելու սուր հաւատ կլանում է արուեստագետին:



Ս. Սարեան՝ «Ապրիլեան բնապատկեր»

Անձնական միաձուլում է ընդհանուրին, երկրի սրտի բարախիւնը նա զգում է իր սրտում, պատկերները դառնում են անանձնական ապրումների մարմնացում, ծնունդ առնում աղօթքի նման: Նրա «Հայաստան», «Գեղամայ սալու մեզ խօսելու գերիարակչութեան հայկական տարբերակի մասին, որին բնորոշ են առանձնայատուկ գոտ ազգային գծերը: Այդ ուղղութիւնն են ներկայացրել Մեղքոն Քեպապեանը, Լեւոն Թիւթիւնեանը, աւելի ուշ Գառուին (Գառուինի Զուլումեան), Լեւոն Մինասեանը, Ժանսէյը (Յովհաննէս Սէմէրեան):

«Հայկական գերիարակչութեան արուեստում յայտնուեց նաև մի արուեստագետ, որի մասին ամբողջակամ խոշոր նկարչի վրձնով Հայաստանի իր դիմապատկերն է կերտել, անժամանակակերպութեան կերպարները: Լայնաօտուած էր սուր տեսողութեամբ, գերբնական յուզական ընկալմամբ եւ անհաւանական գերզգացողութեամբ: Այդ ամէնը գոյսից են, որոնք մինչ գերիարակչութեան հանդիպելը, եւ նրանք ասացին իրեն՝ դու արդէն ունես ամէնը»: Խօսքը Արշիլ Կորքի՝ Ստալինի Աղոյեանի մասին է:

